

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԵՐԳ, ԱՌԱԾ, ՀԱՆԵԼՈՒԿ

ԵՒ ԱՅԼՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՎ

ՀԱՒԱՔԵՑ

Ս. ԴԱՅԿՈՒՆԻ.

ՅԱԻՆԵԼՈՒԱԾ

ԽԼԱԹՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

Ա.

ԵՐԳԵՐ



ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՅԷԼԵԲՍԱՆՈՍ

Կարձկանայ Նանկանց գիւղի բարբառով *

Բուրն մի քամամ ոսկի ունեմ,
Մէօկ էլ քամամ արծաթ ունեմ.
Փառք եմ փառօք ստեղծողին:
Գարբէլ խրէշտակ իջաւ, ասաց.
— Եփրեմաց թագւոր,
Անանեաց թագւորի կին,
Իեօ բուրն բացան էզար գետին.
Աղքատներաց ցրուի.
Աստուած քե տայ միջաց որդիմ.
Անուն զնես յելէքսանին:
Եփրեմաց թագւոր հաւատարիմ չերաց.
Անանեաց թագւորի կին հաւատարիմ էրաց.
Իջաւ բուրն բացան էզարկ գետին.
Քաղաք քաղքով ժողուել էտու.
Աղքատներաց ցրուեց:

* Շատ արտաուշ եւ օրօրուելով թխուր եղանակով երգած է Աւմադան Մարտիրոսեան 65 տարեկան:

Ին օր ին ամիս պահեց լիորին.
 Աստուած էրեց ին օր քմաւ.
 Անանեաց Թազուրի կին
 Չոք եղար գետին,
 Բերեց յէլէքսան որդին,
 Գաբրէլ խրէշտակ ասաց.
 — Ով Անանեաց Թազուրի կին,
 Քեաւոր կանես Ոսկերերան սուրբ Օվանէսին.
 Ծառայ կելնիմ ստեղծողին,
 Եօթ օր քմաւ Սուրբ Օվանէս,
 Ոսկերերան քեաւոր արին՝
 Անուն գրին յէլէքսանին.
 Յէլէքսան մէկ տարեկան,
 Այա Սոֆի պիւր եաւցեաց.
 Յէլէքսան երկու տարեկան,
 Այա Սոֆի իփի եաւցեաց.
 Յէլէքսան երեք տարեկան,
 Այա Սոֆի իւշ եաւցեաց.
 Յէլէքսան չորս տարեկան,
 Այա Սոֆի բեռ եաւցեաց,
 Յէլէքսան խինգ տարեկան,
 Այա Սոֆի ալթի եաւցեաց.
 Յէլէքսան էղաւ եօթ տարեկան.
 Տարան մըտ Սուրբ Օվանէս Ոսկերերան աշկերտութեն,
 Էնի էրաց վարպետութեն,
 Տասնութինգ աւուր վերէն
 Ջուապ էրաց Եփրեմաց Թազուրին.
 Ասաց.— Էն օր Աստուած քե տուեր ա,
 Ծառայ կելնիմ ստեղծողին.
 Մենք շանց կտանք քրէական,
 Էնի կառնի գշարական.
 Մենք շանց կտանք գշարական,
 Էնի կառնի կտակարան.
 Մենք շանց կտանք կտակարան,
 Էնի գլխեց չորս գլխօխ աւետարան.
 Ջուապ տարին Անանեաց Թազուրին.
 — Քեօ յէլէքսան խասեր՝ էղե խաւսարական,
 Անանեաց Թազուրի կին.
 Քեաղաք քաղքով ժողուել էտուր.
 Կոյս Մարգրիտ նշան էգիր.

Մի չար դիւուման էրի, դէմ առաւ.
 Ասաց.— յէլէքսան, մէկիկ որդին,
 Դաւի չունես խլաւ չար բանին.
 Ականջ մէներ քեօ ծնողին:
 Զուալ դնաց Ոսկերերան Սուրբ Օվանէսին,
 — Ոսկերերան Սուրբ Օվանէս,
 Ականջ չէնայ ուր ծնողին.
 Ականջ կէնայ փռ դիւումնին,
 Օնախ ընկնի ձեռ դիւումնին:
 Ասաց.— Ո՛վ յէլէքսան մէկիկ որդին,
 Ականջ մէներ փռ դիւումնին.
 Էրա կանք ասանուորին:
 Ասաց.— Ես դաւի չունեմ չար բանին,
 Չեմ մնար մլտ ծնողին:
 Անանեաց Թագաւորի կին
 Չոք էզար գետին.
 Ասաց Ոսկերերան Սուրբ Օվանէսին.
 — Ծառայ կըլնեմ քեօ ստեղծողին.
 Հեամ կանանչ մեռօն էս.
 Հեամ մլտ Առտուած փառաւորես.
 Տիւ խրատմ տաս յէլէքսանին,
 Օնախ չընկի ձեռն օտարին:
 Ասաց.— յէլէքսան, մէկիկ որդին.
 Ականջ էրա քեօ ծնողին:
 Բերին եօթ օր, եօթ գիշեր խարսնիս արին.
 Տարան եօթ դարկեախ դեցեցին.
 Մէջ սենեկին կոյս Մարգրիտ դրին:
 Խառաւ կէս գիշեր, յէլէքսան
 Ասաց.— Կոյս Մարգրիտ.
 Իմ մատնիք առ մըջ քեօ ճկտին,
 Ես կայնեմ իմ եղեկեցին.
 Շոտ կը խասնենք էն չար բանին:
 Խաւ խօսացին Կոյս Մարգրտի
 Քեօն տարեր էր, զաչք բացեց.
 Կորուսեր էր մէկիկ որդին:
 Առաւօտուն ժամ ձէնէցին.
 Անանեաց Թագաւորի կին
 Էլաւ չարագ էլից քաս ու թեփսին.
 Ասաց.— Էրթամ, տեսնիմ խարս ու փեսին:
 Էկաւ— կայնաւ շէմաց վերէն, բան չկէր.

Կերթայ մըջ դըարկըխին՝ բան չկայ.
 Կերթայ մըջ սենեկին,
 Կոյս Մարգրիտ շեփոր կենէ մըջ սենեկին.
 Ասաց.—Աւեր խօր տո՛ւն.
 Տիւ խաւան չէս իմ բուրն բացնին.
 Տիւ խաւան չէս իմ ֆոյխսաւայուն.
 Թէ խաւան չես իմ մէկիկ որդուն.
 Որ շեփոր կէնես մըջ սենեկին,
 Ասաց.—Խաթուն կիսուր, տիւ վեր արի.
 Ասաց Վոյս Մարգրիտ.
 Իմ մատնիք առ քեօ ճկթին
 Սա կայնեմ իմ եղեկեցին,
 Շոտ կը խառնենք էն չար բանինչ,
 Քունս շտարաւ անուշ բարձին.
 Կորուսեր ի քեօ մէկ որդին,
 Մօր ծծեր լացին մըջ ծոցին.
 Մնկներ առին չուր գետին.
 Ասաց.—Ինչ տենեմ.
 Կորուսեր է իմ մէկ որդին:
 Եռսունուերկու տարի
 Կուս Մարգրիտ մնաց մըջ սենեկին,
 Անանեաց թագւորու կին
 Ուր բուռն բացան էզար գետին.
 Աղքատներաց ցրուել էտու.
 Որ կնտընի ուր մէկ որդին:
 Յէլէքսանոս յէլաւ ճամբախ.
 Դեմ առեց նովովըրին.
 Ասաց.—Նովովոր, եօթ օր կու քմի,
 Մէկ աման ջիւր կարմիր փարչով՝
 Մէկ գարէ խաց ձի խասուցես.
 Էրթամ, աղօթք անեմ,
 Կէս քե, կէս իմ ուստին (չասաց ձի խամար):
 Յէլաւ, եօթ օր էղաւ եռսունուերկու տարի,
 Առաւօտուն խաչկան ծունտը էգիր.
 Ասաց.—Ինչ ջուլապ տամ ստեղծողին.
 Աղքատ մուցեր եմ կէս ծովային:
 Կառնի փառչմ,—պաղ ջիւր,
 Մէկ գարեխաց
 Կերթայ ծովու կղզին.
 Դեմ կառնի յէլէքսանին.

Ասաց.—Աղքատ, մոռցերեմ քե
 Կէս ծովային,
 Ինչ ջուլապ տամ ստեղծողին:
 Ասաց.—Բան չկայ.
 Անօթցեր իմ, խողն իմ կերեր.
 Ծարաւցեր իմ, շաղն իմ լեզեր.
 Աղօթք իմ արեր կէս քե,
 Կէս իմ վարպետին:
 Ասաց.—Ո՛վ նովովոր (նովովոր էնու վարպետն էր),
 Ծառայ կելնիմ քեօ նովին,
 Նօթ օր ձի մօնլաք տաս.
 Էրթամ, տեսիմ իմ խօր բուռն բացանին,
 Քեօյք ու սարին,
 Նոր խալալ սրտով
 Իմ քնասաւ պարզեմ, խօզիս տամ:
 Էրի հօթ օր ման էրի.
 Նռսունուերկու տարի ոչ լուացուեր էր.
 Ոչ թախթըփեր էր.
 Աւջուու մազեր էրկնցեր էր.
 Չոմ ոտաց իրիսն էր խասեր.
 Իտիւու մազիւր չոմ կրնկներ էր խասեր:
 Էրի խի, Անանեաց թագաւորի կին նստեր կուլայ.
 Աղքատներ կուշտ աղօթք կանեն.
 Կասի.—Անանեաց թագաւորի կին.
 Քեօ խալայեղներաց մէջ աղօթք անեմ,
 Բալիի գանես քեօ մէկիկ որդին:
 Ասաց.—Նռսունուերկու տարի աղօթք կանեմ
 Տեղմ տուէք, էն էլ թօ անի:
 Յէլաւ գնաց,
 Ինչ ծուտուր կը դներ.
 Խաչ կը հաներ,
 Բերնէն լոս կը բոխեր:
 Խալայեղներ էկան գանգատ
 Անանեաց թագաւորի կնկան.
 Ասացին.—Անանեաց թագաւորի կին.
 Էն ինչ կրակ բերան էր,
 Բերիւր քցիւր մընջ մե.
 Բերան կը բանայ, կը խփայ.
 Քեօ մէկիկ որդուն կանիծայ:
 Անուն էրաց խալայեղներուն,

Տարան, էցքին տաք սաւերուն.

Մեծին տիւին.

Տարան թողին տակ փողոցին.

Չասաց՝ եւ իմ քեօ մէկիկ որդին:

Խաց կուտին, կը լուին ժանգոտ քեփսին,

Տանին լակեր կուտին, կասին.

— Անանեաց թաղւորի կին

Քի զաւի խրկեր.

Գլու ինչ վեր վերուցեր,

Կը լցին գլխուն.

Կիգեր խօրոտ մաղերաց տակ:

Գերնաց գհանգատ

Անանեաց թաղւորի կնկան.

Ասաց.—Անանեաց թաղւորի կին,

Խրատմ տուր քեօ խալալեղներուն.

Կը լուան խօրոտ քեփսին,

Կը բերին լցին խօրոտ մուրսին:

Անանեաց թաղւորի կին.

Գերլեօխ կը վերու.

Օրան կենայ, կասի.

— Քեալա օգեր, քեալա բոգեր.

Տիւ էր կը լուաք խօրոտ քեփսին.

Տանէք. լցէք ինոր մուրսին.

Բէժ ու բէժլէխ յէլէքսանին,

Չէ ծիրանին յէլէքսանին:

Էլման գերնաց. դէմ փողոցին աղօթք էրաց.

Էլման պիրեցին, լակ լցին դլխին.

Էլ չգերնաց գհանգատ.

Սօթ օր որ բմաւ.

Էլման պիրեցին լակ լցին գերլխին:

Տեսան, աղքատ խանգեր ա մըջ փողոցին.

Ջուապ տարին Անանեաց թաղւորի կնկան.

Ասին.—Աղքատ մեռեր մըջ փողոցին.

Լուս կամար ա կապեր վեր ինոր:

Քլաւ էկաւ Նփրեմաց թաղւոր,

Անանեաց թաղւորի կին.

Քեաղաք քեաղքով քօփ էլան, թափան դլխին.

Տեսան աջ ձեռ խփուցեր ա:

Խնչ էրեցին, ձեռ չբացուաւ:

Նփրեմաց թաղւոր ասաց.

— Բիրէք քեալփաթին, ձեռ բռնանք:
 Անանեաց թագուորի կին ասաց.
 — Աման, քեալփաթին մի թալէք ինոր ձեռ.
 Էնի կը մանի իմ յէլէքսանին:
 Գեաղին Ոսկերերան Սուրբ Օվանէս բերին.
 Ջալալոց հեֆիմ բերին.
 Ասաց.— Անանեաց թագուորի կին,
 Խապար չունիմ էսա բանին.
 Խապար էրէք Սօղոմոն իմաստունին:
 Գեաղին Սօղոմոն իմաստուն բերին.
 Սօղոմոն իմաստուն ասաց.
 — Թէ բանայ ինոր ձեռ.
 Մէ կուս կը բանայ,
 Մեղեցին, մեղեցին ...
 Կուս Մարգրիտն ի հասուն իրկու տարի
 Մէջ սենեկին. գեաղին բերին.
 Մե փեռ ոսկի լցին.
 Մե փեռ խունկ, մոմ կաշուցին.
 Ձեռ տուեցին.
 Փռացուցին մէջ խալայեղներաց.
 Որ գտնին մէկիկ որդին,
 Կուս Մարգրիտ ցրուեց ոսկին.
 Գեղնաց ինոր մօտ, չոր իզար գետին.
 Ձեռ բացուաւ, թուղթ ինաւ ֆը՛ռ մէջ գետգին:
 Սօղոմոն իմաստուն թուղթ առաւ, կարգաց.
 — Վերանէկ, իմ մօր անուն Անանիա.
 Չերանէկ իմ խօր անուն Եփրեմիա.
 Իմ աներոջ՝ Ջաքարիա.
 Իմ զօքնչիս՝ Խոռոմասիմա.
 Իմ քեալօրոջ՝ Ոսկերերան Սուրբ Օվանէս.
 Իմ նշանած՝ Կուս Մարգրիտ.
 Չէք հաւատար, ես ձեր յէլէքսանն եմ մէկիկ որդին:
 Կուս Մարգրիտ ասաց.
 Ծառայ կրլիմ քեօ գերեզմանին.
 Եօթ օր թմաւ, ձի կը տանին խեա քեօ կշտին:
 Անանեաց թագուորի կին ասաց.
 — Ջազայի խալու կտուէք իմ յէլէքսանին:
 Սօղոմոն իմաստուն ասաց.
 — Ինոր մագեր խորենք ինե.
 Էնի ընդունելի ա մըտ Աստուած:

Եփրեմաց Թագաւորի կին ականջ չէրաց.
 Զագայի խալաւ կտուել էտու.
 Կտուողի ձեռքեր չորցաւ.
 Կարողի աչքեր կուրցաւ,
 Մագէ շորեր փաթութեցին, էրին պատանք.
 Խրեշտակ Աստծուն էկաւ, ասաց.
 — Քե ոտով, գլխով տանեմ դրախտ:
 Եօթ օր լուարարուծեն էրեց կուս Մարգրիտ.
 Յէլէքսանոս մէկիկ որդու գերեզմնին.
 Եօթ օր քմաւ, մեռաւ.
 Խորեցին խլաւ ինոր:

— ԷՄ՝ ԷՄ՝ —

ԱԼԷՔՍԱՆ

Բ. ՃԻՒՂ.

Թաւրիգի բարբառով *).

Եփրեմ Թագաւոր շատ ունէր մալ ու մալ խագնա,
 Զուներ մին պտուղ.
 Ասաւ. «Ո՛վ Քէյվաճի Աննայի,
 Արի զօր ու գիշեր աղօթք անենք,
 Աստուած տայ մեզի մին պտուղ»:
 Օխտը զօր ու գշեր ժամ ու աղօթք արան,
 Աստուած տուաւ ընդոնց մին պտուղ.
 Դրան լալի դունաղը:
 Լալի դունաղից փախնում էր խաղաբանների մէջը.
 Յեխէ տաճար էր շինում, փէտէ նով:
 Լալէն էկաւ ասաւ. «Ո՛վ Եփրեմ Թագաւոր.
 Քո Ալէքսան շատ գիժ ա, շատ անխելք ա.
 Ղուճաղիցս փախնում խաղաբանների մէջը,
 Յեխէ տաճար ա շինում, փէտէ նով».
 Ասաւ. «Ո՛վ լալա, ո՛վ ունի իմ Ալէքսանիս բարբ».
 Ասաւ. «Մէ Զուլճակ ունի քո Ալէքսանի բարբ».
 Եփրեմ Թագաւորն ասաւ.— Խագնէ դուռը բաց արէք:
 Մէ խուրճին ոսկի լցաւ, գնաց Զուլճակի դուռը:
 Զուլճակն ասաւ. «Ո՛վ Եփրեմ Թագաւոր,

* Առած է Համասփիւռ Նիկողոսեան 50 տարեկան:

Իմ մեղքն ինչ ա, էկեր ես իմ դուռը:
 Եփրեմ Թադաւորն ասաւ.
 —Քեզի ունին իմ Ալէքսանիս բաբը.
 Զուլհակն ասաւ. «Թէ որ ընձ էլ չունենամ,
 Ուրիշ տեղից կճարեմ քո Ալէքսանիդ բաբը:
 Ալէքսանի բաբը առան, բերան,
 Օխտը զօր ու գիշեր հարսնիք արան.
 Տարան, դրան օխթն օթախի մէջը:
 Ալէքսանը պոլիսա տուաւ, ասաւ.
 «Տէր դու ազատես ընձի էս մեղքիցը:
 Նէս Մարգրիտ քողքն էրէսէն դէն քցաւ,
 Ասաւ.—Ալէքսան քո խէրն ընձի բերեր ա քեզ համար,
 Քե բերեր ա ընձի համար.
 Արի ուտենք, խմենք անենք աշխարքի ֆեֆը:
 Ալէքսան մատի մատնիքը հանաւ,
 Տուաւ Նէս Մարգրտին, ասաւ.
 —Օխթը տարուց սորա ես քոնն եմ, դուն իմն ես:
 Զեռ տուաւ, շինած դռները բացաւ,
 Գնաց տեսաւ ճամբին մի ճրագի շոնի ա էրեւում.
 Տեսաւ մի աղքատ նստած ա.
 Ասաւ.—Ո՛վ աղքատ,
 Քո շորերը տուր ընձի, իմ շորերը առ քեզի.
 Ասաւ.—Ո՛վ Ալէքսան, քո խէրն իմանայ,
 Իմ խողս տոպրակով դուս կածի:
 Ասաւ. գիժ անխեղ, տար ուրիշ երկիր, ծախի,
 Իմ ջանքս դուա արա:
 Առաւօտը լուսացաւ, մեծ ֆեւանի Աննային.
 Տեղիցը էլաւ, տեսաւ, մէկ լացի ձէն ա գալի.
 Տեսաւ, օխթն օթախի մէջիցն ա գալի.
 Գնաց տեսաւ Նէս Մարգրիտ քողքն էրէսին ջուր ա արեւ.
 Ասաւ.—Հէր ես լացում, գիժ ու անխեղ.
 Մալս ա պակաս ես խազնէս:
 Ասաւ.—Ի՞նչ եմ անում մալ մալ ու խազնէդ,
 Կէս գշերուանից յո՛ւր ա, Ալէքսան որդիդ.
 Մեծ ֆէյվանի Աննային ձեռը տարաւ,
 Սիւտակ վարսը կիտաւ առաջը.
 Էլաւ գնաց, ասաւ.—Ո՛վ Եփրեմ Թադաւոր,
 Ո՛ւր ես քնէ, էլի՛, կէս գշերուանից
 Ո՛ւր ա քո Ալէքսան որդիդ.
 Եփրեմ Թադաւոր վեր ելաւ,

Սիւտակ միրուսը դուրս տուաւ, կիտաւ առաջը.
 Կայի դռները կապել տուաւ,
 Ժողովարդը կիտուաւ առաջը, ասաւ.
 —Ո՛վ Նփրեմ թագաւոր.
 Քո վախէդ սփ կարա, քո որդիդ սլահէ.
 Դուս գանք, էլի քո որդիդ կը ճարուի:
 Խազնի դուռը բաց արձան,
 Մի խուրճին ոսկի լցան. գնացին տեսան,
 Ճանապարհին մի աղքատ ա նստած, ասաւ.
 —Ո՛վ Աղքատ, ասաւ, ըստեղիցն էկաւ իմ Ալէքսանին հոտը.
 Դու իմ Ալէքսանին աեսմբո:
 Էդ աղքատը Ալէքսանն էր. աղքատն ասաւ.
 —Ալէքսան ըստեղէն անցաւ, ասաւ,
 «Իմ խէր թող էթայ օխտը աղքատատուն շինի.
 Օխտը տարուց ետոյ Ալէքսանը քոննա, դու Ալէքսանին».
 Նփրեմ թագաւոր ոսկին թողաւ աղքատին.
 Էկաւ աղքատատունն շինաւ,
 Աղքատներուն հաց տուաւ, շոր տուաւ,
 Մուծը կտխեց, Ալէքսանը դեպք մէ դուլկարի մօտ, ասաւ.
 —Ինձի համար մի նով շինի.
 Ասաւ.—Մուծնա: Ոսկին կիտաւ առաջը,
 Ասաւ.—Էս խազնի օղյովը շինի.
 Ալէքսան մտաւ նովի մէջը, ընկաւ ծովի մէջը.
 Օխտը տարի մնաց էդ ծովի մէջը.
 Սատանէն էկաւ, սատանութիւն արաւ, ասաւ.
 —Ո՛վ Ալէքսան, ո՛ր էս մնացէ, սե ջուրն էկաւ,
 Քո խօր տունը տարաւ:
 Ալէքսան էկաւ, խօր դռնիցը անցաւ,
 Տեսաւ մեծ ֆէյվանի Աննան,
 Դիտը դրեր ա Նէս Մարգրտի ծնկան.
 Նէս Մարգրտն ասաւ.—Մեծ ֆէյվանի Աննա.
 Ըստեղիցն էկաւ իմ Ալէքսանին հոտը.
 Ասաւ.—Մէրդ մնունի, Ալէքսան յո՛ւր ա.
 Օխտը տարուայ յետե դու Ալէքսանին ես.
 (Ձին իմանում օխտը տարին քամամեր ա).
 Ալէքսանը գնաց, նստաւ աղքատատնումը,
 Հաց բերան չկերաւ, շոր բերան չխաղաւ.
 Ասաւ.—Տէր դու ընձի աղատես էս մեղքիցը:
 Աղքատներ էկան, առին. «Ո՛վ Նփրեմ թագաւոր,
 Մէկ աղքատ ա էկե, ոչ ուտում, ոչ խմում,

Աստծուն փութուր ա տալի՜ Ասաւ.—գնացէ՛ք,
Կալի դուռը խանէք, դրէք ականճի մէջը՝
Տորան դրին անկաճի մէջը. Ալէքսան էլի ասաւ.
—Տէ՛ր, դու ազատես ընձի էս մեղքիցը.
Եկան ասին, ընդուց բերար ա ասում.
Ասաւ՝ խանէք, դրէք աչքի մէջը: Ել նա ասաւ.
—Տէ՛ր դու ազատես ընձի էս մեղքիցը.
Եկան ասին. «Ո՛վ Եփրեմ թագաւոր,
Ընդուց բերարն ա ասում.
Ասաւ.—Գնացէ՛ք, փախիկը քանդէք,
Դրէք փախիկի մէջը:
Թափի կէս քչեր սաղ ա մնացեր.
Կէս քչերից ետոյ մեռեր էր.
Սաղ ձեռքը մնացեր դուս, ձեռի մէջը գիր կար.
Եկան խապար բերին,—Յփրեմ թագաւոր.
Աղքատը մեռեր ա, ձեռքին մի գիր կայ.
Ինչ անում են չի բացւում:
Յփրեմ թագաւոր էլաւ գնաց.
Ինչքան ժողովուրդ կար էլան գնացին,
Չկարցան ընտուր ձեռի մէջի էն թուղթը հանին:
Յփրեմ թագաւորն ասաւ.
—Ընձի ունեմ Նէս Մարգրիտ,
Կարելի ա էն արդար էլնիւ.
Նէս Մարգրտին կանչին՝ էկաւ,
Ձեռքը բացաւ, թուղթը ընկաւ,
Թուղթը կարդացին, նոր իմացան
Որ իրանց Ալէքսանն ա:
Թուղթը որ կարդացին,
Նէս Մարգրիտ ընտէ մեռաւ.
Ջուխտին խորան աղքատատանը,
Վրաները լուս կամար տուաւ:

ԿԱԳՈՒԱՆ ԱՍԼԱՆ *

 ագուան Ասլան քսան մէկ տարեկան,
Ունէր իրեք խարիր վացցուն վեց աղքատ մըջ աստնուորես.

* Մոկաց ու Վաղարշապատի խառն բառքառով ասած է Մկրտիչ Կուլան (հայացած ֆուրդ):

Կը խմէր նաւան գինի. քէն խօսութեն կաներ,

Ձի գիտէր մեռնել կայ մըջ աստնուորիս:

Օրերաց մէկ օրը՝ մէկ աղքատ էկաւ, ասաց.

— Կագուան Ասլան, քու աղքատն ի մեռեր մանչ փողուցըն:

Կագուան Ասլան թուղից խաց, թուղից նաւան գինին.

Ասաց.— Ո՛վ ի առեր իմ աղքատի դառնիկ խոգին:

Խեծաւ Բօգրէկին. քչեց գինաց մանջ դաշտին:

Ասաց.— Ո՛վ ի առեր իմ աղքատի դառնիկ խոգին:

Աստծուն շատ դժար էկաւ. Գաբրիէլ խրիշտակ օղորկից

էկաւ, ասաց.— Կագուան Ասլան, յիւր կերթաս:

Ասաց.— Կերթամ. չըմ գիտի, ո՞վ ի առեր իմ աղքատի դառնիկ խոգին:

Ասաց.— Ես իմ առեր քու աղքատի դառնիկ խոգին.

Ասաց.— Ինչո՞ւ առեր իմ աղքատի դառնիկ խոգին.

Արի մալդան. հս գիւ, կուր էնինք:

Տուեցին, կուր արեցին մինչև յիրկուն.

Գաբրիէլ խրիշտակ չի խմբէր որ զարկէր,

Կագուան Ասլան սրտէն կը զարկէր:

Էկաւ մինչև յիրկուն, Գաբրիէլ խրիշտակ շատ նեղացաւ.

Յալքիր շուռ տուեց, ոտքեր բռնից. մինչև գլխի դագաթը մզաց:

Գլուխը ցաւաց. սիրտը ցաւաց. չուքեր թուլցաւ,

Ձիւր մշակներ մասն թիւքեր. տարան թալցըն մանչ ուր տեղաց:

Գաբրիէլ խրիշտակ խիծաւ իրա ձին, խագեաւ իրան շորեր.

Ձեռ առաւ իրան կապոյտ վարուցը.

Կագուան Ասլանի գլխի վիւրէ կանգնաւ:

Ասաց.— Պտի աւանդեմ քեւ քեաղցրիկ խոգին:

Խուգին քաղուից մինչիւ չուքերը.

Կագուան Ասլան չի գիտէր մեռնել կայ մանչ աստնուորիս,

Ասաց.— Կանչիմ իմ մէր դայ,

Բալիի յիւր խուգին տայ իմ խուգու փոխանին:

Մէր իկաւ. ասաց.— Մէրիկ,

Գաբրիէլ խրիշտակ կուգի իմ քեաղցրիկ խուգին.

Արի. քեւ խուգին տու իմ քեաղցրիկ խուգիւ փոխանին:

Եսաց.— Իս ինչ անիմ, ուրդի.

Իրիք խարիւր վացցունվեց տարի ումը արեր իմ.

Մանչ աստնուորիս նիւր հարսն իմ, քուղ իրիսիս ի.

Իմ քեաղցրիկ խուգին չըմ ըտամ քեւ խուգիւ փոխանին:

Մէրը թուղից գինաց:

Կագուան Ասլանի խուգին քաղուից, էլաւ պուրտը.

Եսաց.— Կանչըցէք իմ խէր գայ,

Բալֆի յիւր խուզին տայ իմ քեաղցրիկ խուզիւ փոխանին:
 Խէր էկաւ. էսաց.—Ուրդի, յի՞նչ կ'ասիս:
 Կասի.—Գաբրիէլ խրիշտակ կուզի իմ քեաղցրիկ խուզիս:
 Արի, քիւ խուզին տու իմ քեաղցրիկ խուզիւ փոխանին:
 Է՛, ուրդիս,
 Իրիք խարիր վացցուն վից տարը ումը իմ արեւ մանչ աստնու
 րիս.

Թագ գլխիս ի.

Իս չլմ իտայ իմ քեաղցրիկ խուզիս քիւ խուզիւ փոխանին.
 Նիւր կեանք տ'անիմ մանչ աստնուորիս:

Խէր Թուղից, գինաց:

Կագուան Ասլանի խուզին քաղուաւ.

Իլաւ մինչիւ դօշը:

Իրա ճար-իլանը կտրաւ.

Բարեկամ չունէր աշխրջի էրեսին.

Մարգրիտ անուն նշանու ունէր.

—Կանչէք, ասաց, Մարգրիտին գեայ.

Բալֆի յիւր խուզին տայ իմ քեաղցրիկ խուզիւ փոխանին:

Իս կեանք ինիմ մանչ աստնուորիս:

Կանչցըն, յիւր նշանու—աղջիկ Մարգրիտ էկաւ.

Տըսաւ Կագուան Ասլան դառ վիճակի մէջ ի.

Սիրտ փլաւ, Աստուած կանչըց, էսաց.

—Կագուան Ասլան, էրկինք, գետին, Աստուած վկայ ըլնը.

Իս իմ խուզըն տամ քիւ քեաղցրիկ խուզիւ փոխանին:

Մարգրիտ խուզըն քաղուից.

Կագուան Ասլան յիտ դարձաւ:

Գաբրիէլ խրիշտակ էլմ էսաց.—Մարգրիտ,

Ձիկայ աստնուորիս լաւ լաւ տղէք, մէկը բռնը.

Քիւ խուզըն մը՝ տայ Կագուան Ասլանի խուզիւ փոխանըն.

էսաց.—Ոչ, Կագուան Ասլանի դարտ իմն ի.

Լիւսնակ, էրեգակ, Աստուած վկայ ըլնի.

Իս իմ խուզըն տամ Կագուան Ասլանի խուզիւ փոխանըն.

Էգուան օր չասըն, «գառնիկ որբեալի Մարգրիտ».

Աստըժուն շատ դժար էկաւ.

Իրիք խարիր վացցուն ու վից տարը ումը տուեց.

Նշանու Մարգրիտին ու Կագուան Ասլանին.

Խօր—մօր խուզըն առաւ յիւր խուզիւ փոխանըն.

Նուրէն կեանք արաւ մանչ աստնուորիս.

Կագուան Ասլան ու Մարգրիտ.

Օղորմի իրանց:

ԿԱՐՈՍ ԽԱՉ

Ալաուկեհրսի բարբառով.

Թոռոզներ ժողուան վեր յիրարու,
 Մէկ միտք մե էրեցին.
 Իրանք իրանց խաչ մի սուքեցին.
 Գդի թփով փաթութեցին.
 Էլան, ծառի գլօխ գրեցին,
 Բոբկըցան, գլօխ բացին,
 Էլան ծառի գլօխ մէկ մէկ համբուրեցին.
 Էրեցով, սարկաւազով գացին,
 Կարոս խաչին բերեցին.
 Բերեցին. մըջ ժամուն դրեցին.
 Դիշեր լուս կլտէր տաճարին,
 Յերեկ հով կենէր տաճարին:
 Մէկ խօսքիմ էլաւ հայոց ազգին,
 Գնաց. ասաց քուրդ պարոնին.
 Քուրդ պարոն ժողուեց քառսուն մօլլա,
 Քառսուն Ֆախի էրաց անկեար.
 Գնաց վեր Կարոս խաչին:
 Էկաւ, մտաւ Եղեկեցին,
 Կայնաւ դէմ տաճարին.
 Իրան ձեռ թալից Կարոս խաչին,
 Բերան ծռուաւ դէմ ակնջին:
 Կատղաւ Ուրին, կատղաւ ուր ձին,
 Ուրանք զուրանք սուր քաշեցին:
 Քուրդ պարոն ասաց.
 —Մառայ կեղնիմ Կարոս խաչին,
 Քառսուն Եիսակ, քառսուն անծին,
 Շիրակ մատաղ կանի սուրբ Կարոս խաչին:

* *

Մակաց Սեպ գիւղի բարբառով *.

Զարաթ օր լոս կիրակին,
 Խոռոզներ բեարհաւան (հաւաքուեցան) մէջ էն դաշտին.
 Բերին բոխէ խաչ մը շինեցին
 Չորս գըլեօխ խնձուրիցըն,
 Թգի թուփով փաթութիցըն,

* Առաժ է կոյր Մանիբակ Մելիմեան 58 տարեկան:

Էրկնուց մասունք իջուցըն,
 Մէկ մէկ բերան «ձէր օղորմեայ» կանչիցըն,
 Ծառայ կէլնեմ Կարոս խաչին:
 Խապար տարան քիւրդ Օմարին,
 Խայու խամա խաչ մի իլեր ի.
 Էն բաբաթ չի խայու խաւտին,
 Էն բաբաթ ի քեօ դիվնին.
 Գիշեր լոս տայ վեր քեօ բրաճնին,
 Յերեկ խով անի վեր քեօ բրադչին:
 Կանչեց Ալին, կանչեց, Մահմատ.
 — խաչմ իլեր ի խայու ազգին,
 Էն բաբաթ չի խայու խաւտին.
 Էն բաբաթ ի իմ դիվնին:
 Գեացին խառան մընջ կէս ճամբսին,
 Կատղաւ Ալին, կատղաւ ուր ձին.
 Շուն կատղաւ մընջ թրի կէժակին.
 Ատամ էտու թիւի կաշին,
 Էրէրաց ըանու աղէն մընջ ուրուրուցըն,
 Էրէրաց ըանու բերդ վըար դիվնին.
 Ասաց, — Ծառայ կէլնեմ Կարոս խաչին.
 Կըտամ քե քառսուն ջորի մատաղ,
 Կըտամ քե քառսուն շիւալ մատաղ,
 Կըտամ քե քառսուն էրինջ մատաղ,
 Կըտամ քե քառսուն խոջ մատաղ,
 Կըտամ քե քառսուն մաքի մատաղ,
 Տուէք, տանեն ղնկն ուր թախսին.
 Տիւ չէրէրուցես իմ բերդ վըար դիվնին.
 Տիւ չէրէրուցես իմ աղէն մընջ ուրուրուցըն,
 Ծառայ կէլնեմ Կարոս խաչին:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Չու աղա ես, դու փառա ես.
 Էմեն սրբոց դու զխաւոր ես,
 Մաքուր քեաւոր սուրբ Կարապետ:
 Քե չինած կամար - կամար.
 Լուսն էր դադրած չուր ազմար.
 Քրիստոսի խաբրի խամար:



Քեօ լուսամուտ խըտ աւազան.
 Ոսկի բուռ, ոսկի դաւազան.
 Թուխ մանուկ առջև զանազան:
 Քե շինած է մէջ պրակին,
 Քեօ տօնն էր կանանչ կիրակին,
 Դարսին դարման սուրբ Կարապետ:
 Քեօ ճամբխըներ օլոր - մօլոր,
 Քեօ դուռ կիգէր շատ ըխտաւոր.
 Զիւլուրին ոսկի խնձոր.
 Պայաւորին մուրասատուր սուրբ Կարապետ:
 Դեօ նառիմ քե գովամ,
 Զարբեր բռնեց, մեց զնցան.
 Մէկ բօփալ կեօնդրիկ (կծկած) կէր.
 Ասաց. — Քե կեղնիմ մուխրախան,
 Տանեմ թափեմ Փըռ Պաթման,
 Զուր Բրիտոսս գայ դատաստան:

* *
 *

Ս. ՏԻՐԱՄԷՐ.

Տիրամօր գիւղի բարբառով *).

Տիրամօր ըխտաւորներ կըգեան Մշու,
 Շուշայ կը բերեն Բաղըշու.
 Ով էկաւ ձիով, գնաց ոտով,
 Ուր մուրազ առեց:
 Տիրամօր կող - բօլոր բազում խաչեր,
 Դիւկան իրեն դեխ բոլ - բոլ լաճեր,
 Կը բերեն Թուխ - Թուխ փոշեր:
 Դիւերն էր հովեր, վրէն էր ծովեր,
 Աշխրէ աշխար գիւկէն Տիրամօր ուխտըւորներ.
 Զուխս մի էրկանք մէ կնիկ չկեց,
 Տիրամօր դիւռ խանգ դրեց.
 Ուր մուրաս առեց, ետ դարձաւ
 Վարդիվրայ լոս կիրակին,
 Տիրամօր վրէն լոս կաթաց.
 Օգ Տիրամէր, մէկ Տիրամէր:

* Առած է Շոթան Մարտիրոսեան:

Կիւսնենց գիւղի բարբառով *).

Քեօ դուռ ու դուռ քեար ու քոայ.
Գեառն ու մաքին դան կը բռայ:
Խղճու եարեն կը մոմոայ:
Քիւ ետքն ի ծով, առջկն ի խով.
Քիւ մատաղն ի անծին կով.
Անուշախոտ լոս գերեզման,

Խաթուն Տիրամէր.

Քեօ դիւռ կը գէր շատ ընթաւոր,
Համ ոտաւոր, համ ձիաւոր.
Ձիաւորին ջուլալ կը առս,
Ոտաւորին մուրաս կը տաս.
Բէ մուրաս ի կերեմ,
Ձի մուրասեա:

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

Կարօի բարբառով.

Պսին ուսին՝ սուրբ կուսին ¹⁾.
Գնացինք, հասանք Քրիստոսին.
Վերնածամ պատարագին ի մէջ դաշտին,
Պղծաւորներ երկացին.
Պեղծ թշնամիք երկացին,
Ոտուին գետին պիպուկցին,
Գլուխ էրկինք պատրուակցին.
Սիրտը փորը սուս էրին.
Աչքը էրեսին կուր էրին.
Կալած մնայ, կապած մնայ.
Մինչ ի գալոց Քրիստոսին:

*
* *

Առաջաւ, լուսն ի բարին՝
Ես հաւատամ Տէր կենդանին.
Մարիամ նստէ սուրբ սեղանին.

* Առած է Խոռոմնիսա Մարգարեան:

1) Առած է Ալի Մոյսեան 80 տարեկան:

Աղօթք կէներ սուրբ տաճարին.
 Օրէն իրեք տարուայ գիշեր,
 Մեղքը չյիշուեր դատատանին:
 Հայր Յովսէփ, կոյս Մարիամ,
 Պառկեցեր, երազ տեսար, ելար նստար.
 Խանձաքաղաք խանձարեցիր,
 Խանձաձարով փաթութեցեր.
 Սուրբ Ոհանու գիրկը դրիւ,
 Անունն Յիսուս մկրտեցիր,
 Մկրտիչ սուրբ Կարապետ:
 Սուրբ Կարապետ բանցր տեղ է,
 Չորս բոլորը սար ու ճեղ է.
 Մշու Սուլթան սուրբ Կարապետ:

*
 * *

Պշտեքի չորս կողմ՝
 Լուս անող Աստուած.
 Բանաս աղօթարան,
 Հետ բարի լուսուն.
 Զի մոռնաս դուլդ,
 Զի թողնիս ձեռաց.
 Այնի դու օղորմանաս,
 Հետ բարի լուսուն.
 Հրեշտակներ փառաբանեն.
 Հալածեն
 Վերունաց, թունաց:

Ստուած ճանաչեն,
 Բարեպաշտ մարդիկը
 Կուլան, կաղաչեն,
 Այնի դու օղորմանաս՝
 Հետ բարի լուսուն.
 Հրեշտակներ կայներ,
 Կըսեն դասէ ի դաս,
 Սաղմոս ու շարական,
 Հետ բարի լուսուն,
 Այնի դու օղորմանաս.
 Հետ բարի լուսուն:

*
 * *

Յրագ - ճրագ ճշմարիտ,

Ճիշի խափան Մարտիրոս.
Աղէ վկայ Քրիստոս.
Էրնեկ էրնեկ էն տարին.
Երոսաղէմ շինեցին.
Պաղածառը տնկեցին.
Էն մօրն ըսէք դուս գայ.
Աչքերը բեռով լուս գայ:

*
* *

Ստամբուլու մէջ մէկ վարդմ բուսաւ,
Գնաց Երոսաղէմ, սուրբ լուսը տեսաւ.
Սատանէն ետէն մանգզիլով հասաւ.
Կուլար, կերերար վայ մեղաւորին.
Էրնեկ արդարաց, վայ մեղաւորաց:

*
* *

Յատուածածին տուր մուրասո,
Բարի կարօտս առնէի.
Ժողուէի գիւլ, մանամալ վարդը,
Հետը խառնէի ...:

*
* *

Բայագեդի բարբառով.

Տէր իմ, ընձի ինչ կասես,
— Զիս բռնեցին, չարչարեցին,
Ասող փշով ¹⁾ զիս ծեծեցին.
Քաղցրեկ մօրս լացուցին,
Արուն քրտինք կոխեցին,
Երկինք, գետինք ցնծացին,
Լուսաւորչու կանթեղ վառեցին,
Արնլուայ զիս կոխեցին:

1) Երկար. մի ցողունի ծայրը զնսակի նման բոլորովին կլոր ծաղիկ.
Ինչ օրջապատած մամրիկ կապոյտ ծաղկներով, որ յետոյ մամրիկ փետր կը զոյաճայ
ծաղկմանու վայրը:

Վաճառք բարբառով.

Խորն ընկայ, խոր չտարաւ.
Գետն ընկայ, դետ չտարաւ.
Նկեղեցին՝ ես քահանայ՝
Փող փչեցին յարութենայ,
Խորամախէն խարանացուցին,
Լուսեղէն խանդերձ խաղուցին.
Օսկի քամար կապեցին.
Խնկան ծառեր տնկեցին.
Մազէ. կարմունջ՝ կապեցին.
Արդարներ թռան, գացին.
Մեղաւորներ նստան, լացին:

* *

Պատի - պատի եկեղեցի
Դանկով զարկի, դուռը բացի,
Մտայ ինէ, աղօթք կացի.
Էլայ դիւս, մեղայ տուի:
Մեղս - մեղս, խաղար բերան,
Խոստովանիմ էրկու խաղար՝
Կաթնով աղբուր, քարէ տաճար՝
Խետ Աստըծին անհնջ վաճար,
Աստուած անի մեր խոզիւ ճար:
Իմ անուն Սուրբ Յակոբ՝
Իմ խօր անուն սուրբ Մարտիրոս՝
Ծառին զարնեմ, ծառ կը խշայ,
Ճեօղին զարնեմ, արուն կը խշայ.
Որ ձիկ իրեք բերան յիշայ,
Աստուած ուր խօր - մօր մեղք չիշայ:

* *

Մէյ կէճլատիկ խայիկմ կէր.
Անապատայ վանքը կը մնէր.
Օր կորեկե խաց մը կուտէր.
Կէսն աղքատներաց բաժին կը խանէր.
Բեօբիկ ոտնով կեազ կը քաղէր.

Զլուտ քեամկով կեազ կը կրէր.
Ինքը կը գրէր, ինքը կը կարդէր.
Աստուած խոզին լուսաւորէր:

*
* *

Իմ մեղք չատ ի քընց աւազ ծովու.
Քընց գետնի գնեն.
Վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ,
Զճրն ասեմ, զճրն խոստովանեմ:
Խացնի ի խաւոց խորմեղէն.
Աստուած ունենք մե ապաւէն.
Աստուածասէր մայր կոյս,
Ինչ որ գիտես, մե ուսու,
Դառնի դժողքից մե ընցու.
Մեղաց տոպրակ խլացու.
Խոգիւս խըշտակ ուրախացու:

* *
*

Կիւսմենց գիւղի բարբառով *

Ուսին - ուսին

Սուրբ կուսին
Սուրբ կոյս նստե վեր սեղանին.
Զէն կուտայ աշակերտին,
Պետրոս, իլի.—Պողոս, իլի.
Խօռոմսիմէն խարսնացաւ.
Դաբրէլական փող փչեցին.
Մազէ կարմունջ կապեցին.
Խնկեան ծառ տնկեցին.
Արդար - մեղաւոր ջոկեցին:
Արդարներ ընցան մազէ կարմունջ.
Վեր խնկեան ծառին ճլվլացին.
Մեղաւորներ չոքան, լացին,
Թաժա խացի խոտ իկեաւ.
Իլէք, տեսէք, վնվ իկեաւ.
Բօզ - բօզ ձիաւոր իկեաւ.

*) Վաճայ Թիմաթայ Խուռօ Սարգսեան եղած է:

Մէյ Բրիստոս.
 Մէյ Կեդանանից Աստուածածին:
 Իլաւ սարոյ, իջաւ ձորով.
 Քիւրդ հնւորին գէմ առից.
 Աչքեր էրկինք խաւարից.
 Ոտքեր գետին բիրեռից:
 Իմ տէր իլաւ, ամպեր խաղաց.
 Զորեքդիմաց աշխարհ դնդաց.
 Տէր, մեղաւորիս Աստուած


*
* *

Ալալոց - ալալոց,
 Թալալոց Սուրբ Կիրակոս,
 Պիրէք, տուէք իմ ձիանոց:
 Խայնեմ, էրթամ գէմ տաճարին:
 Քիւրդ հնւորին գէմ առից
 Աչքեր էրկինք խաւարից.
 Ոտքը գետին բիրեռից. ԿԼՆ (նոյնը):

Երեկոյեան աղօթք.

Ղ.Ա.մզլու գիւղի բարբառով *)

Յրադ չնցաւ, չարն ընցաւ.
 Սուրբ Գրիգորն յնցաւ:
 Մեր դուռը ծիրանի,
 Սողոմոն տաճարի,
 Պողոս Պետրոս հրեշտակի,
 Օրչնալ տէր մեր Յիսուս,
 Քրիստոս Աստուած:



Ա Ի Ե Տ Ի Ք *)

Կարձկանայ Նանկանց գիւղի բարբառով.

- Յէսօր տուն ա Մարիամուն. աւետիք.
 Մարիամ զնաց դուռն յէրին. »
 Գամակն էզար Սուրբ սեղանին. »
 Շնցաւ իբեր Յիսուս որդին. »
 Մեռնիմ քե Սուրբ Յովանէս. »
 Բի Գրիստոսին քեաւոր էրին. »
 Բիւրդ հանձարուն փրաթութեցին. »
 Փրառքն ի բարձուն օրօր ասին. »
 Շիւշ օրօրոց օրօրըցին: »
 —Ձեր տղի անուն ինչ ի.
 —Յէկոր քե ծառէ.
 —Սեղան յրաւջե խաղար բըարին. »
 Կթխէն ի ձեռն նռան գինին. »
 Յէկոր նստէ ծառի տըկին. »
 Մաղեր թալե ծառի ճեղին. »
 Յէկոր խեծեր կապուտ քուռակ. »
 Մէջքն ա զարկեր պողպատ-ուրագ. »
 Տան տիկին, սուր տու կշտին. »
 Գնա, խառիր դուռն մառանին. »
 Գընէ չըմ ուզեր ձիմ ու ջորիմ. »
 Գընէ կուղիմ իմ օտաց գին. »
 Տուն եմ շիներ աշնան գինով. »
 Ջըարդ եմ դեր գեարնան ծաղկով. »
 Գերներ վըրէն ծառ խնկենի. »
 Ուճախ վերէն ծալ-ծալ ոսկի. »
 Յըարդն ի վերէն դեղին Դաւիթ. »
 Խողն ա վերէն սիս մարգրիտ. »
 Սներն ինե ամպրաւենի. »
 Տախտն ա ինե քընջ ապրկին. »
 Աւել ինե փուռն մանիչակ. »
 Թռնիր ինե եկեղեցին. »

*) Ծննդեան հրեկոյին գիւղի պատանիներ ծղոնից գործած փութիկ ապալից քել կը կապեն եւ կը կախեն տուն երդիկից ու կտսեն այս երգը. տան օրիկներ նրանց ապաւների մէջ ձու, եղ. բրինձ եւլն, կը դնէ: Առած է Արմաշան Մարտիրոսեան:

Պուտուկ վերէն քընջ աղուընի. աւետիք.
 Խուլին ա վերէն պտրի լուսին. »
 Ակն ա ինէ Ակնայ գիւհար. »

Ա Լ Է Լ Ո Ւ

Մակաց բարբառով.

Յնծացէք, ուրախացէք. ալելուիա.

Սօր ի տօն է Մայրամու. »
 Մայրամ գնաց դուռն յէրին. »
 Գեամակ իտու մարմար քեարին. »
 Շնչաւ իբի Յիսուս որդին. »
 Գեա Յորդանան մկրտեցին. »
 Սուրբ Յովհաննէս քաւոր արին. »
 Բիւրդ խանձարուր փաթրթեցին. »
 Շուշ ուրուրուց ուրուրուցըն. »
 Երանի քի շուշ ուրուրուց. »
 Բրիստոս քիւ մէջ ուրուրուցըն. »
 Երանի քի բիւրդ խանձարուր. »
 Բրիստոս քիւ մէջ էն փաթրթած. »
 Երանի քի գեա Յորդանան. »
 Բրիստոս քիւ մէջն էն մկրտած. »
 Երանի քի սուրբ Յովանէս. »
 Բրիստոսին քաւոր արին. »
 Աստուռն շինած գարնան գեալով. »
 Փռուած ծալ ծալ ծաղկերով. »
 Գերան վերան աճալըրու վերէն. »
 Ալաւ վերէն ծալ ծալ ոսկի. »
 Խողն վերէն սոս մարգրիտ. »
 Սնիւր ինի ծառ խնկենի. »
 Թռնիւր ինի քեան զեկեղեցի. »
 Պուտուկ վերէն շիւրջ եղուընի. »
 Տախտակ վերէն բիմու ծածկոց. »
 Զի լաճ նստի ծառի տակին. »
 Բրչեամ թալի ծառի ծեռքին. »
 Սուճրեկն յեռջն խազար բարին. »
 Կթիւնն ի ձեռ նուան գինին. »
 Հայ առնալկին սօլեր խազի ճըւլլալէն. »
 Գնահ, խասի դիւռ մառանին. »

Քինէ չըմ ուզի ձին ու ջորին. »
 Կամ տարեկան գեառն ու մաքին. »
 Քինէ կուզիմ մաղմ կեօքով. »
 Գաթէն էլ վերէն: »

*
 * *

ԴԵՄԱՍՈՒ ԲԱՐԲԱՆՈՎ *)

Յնծացէք, ուրախացէք, ալէլուիա.
 Էս օր տօն է Մարիամին.
 Մարիամ գնաց դուռն էրին.
 Սնկսաւ իբե Աստուածորդին.
 Էրնեկագին սուրբ Յովանէս,
 Քրիստոս քեօ զերկ մկրտեցին.
 Քրիստոսի քեաւոր էրին.
 Թունի էնի էղաւ եկեղեցի.
 Գաթէն ցինի պտրի լուին.
 Ղուկաս նստի ծառի ճեօղին,
 Բռչեամ Թալի վարդի փշին.
 Տճ, տանակին. տրկին - տրկին.
 Սօլեր խազի չըխչըխկալին.
 Խասի դուռը մառանին.
 Քինէ չուզիմ գեառն ու մաքին
 Քինէ չուզիմ ձին ու ջորին.
 Քինէ կուզեմ կեօզ ու չամիչ:
 Օձու լեզուն էրկու ճղեն.
 Մէյնի բարոց. մէյնի չարոց,
 Բարոց գեայ էսա տան.
 Չարոց էրթայ վեր սարերաց:

*
 * *

ԿԻՍՏՈՆԵՑ ՂԻՂԻ ԲԱՐԲԱՆՈՎ.

Ձեր տղի անուն ինչ է. — Վոհան Լին.
 — Վոհան ճութ՝ ճթացաւ.
 Քեանց բարդի ծառ էրկնցաւ Ալէլուիա:

*) Ծննդեան երեկային երդիէն զուրպայ կը կախեն ու կերգեն. ամեն մի տղին «Ալէլուիա» կը կրկնեն: Առած է Խոռոմսիմա Մարգարեան:

ձեռողիր իթալ քեաղքէ քեաղաք,
 Յըմնն ճեռողին ջուխտմ ճրազ,
 Վերէն ի թառի սինամահաւք, ալէլուիա:
 Օձու լեզուն էրկու ճղակ՝
 Մէյնի չարով, մէյնի բարով, ալէլուիա:
 Չարին էրթայ վիր սարերուն.
 Բարին գեայ վեր էսա տուն, ալէլուիա:
 Մամիկ, մամիկ, ես քե ծառայ՝
 Սօլեր խազի, թող ճըռուրուայ.
 Չուր մառնի դիւռ մէյ գնա. ալէլուիա:
 Քիզնէ չինք ուզի ձին ինան ջորին.
 Քինէ կուզինք էրկու կուրուօ, խարիր փարայ:

*
* *

Վառայ բարբառով *)

Ահօ, նոր իկաւ նխիւն դդիւմ,
 Բարով ուտիք ձեր խթում:
 (տան աղի անուն կը հարցնեն ապա)
 Արմենակ ճութ էր, ճթացաւ. ալէլուի 1)
 Չանչ ամպրուին (արմաւենին) ամպրաւացաւ.
 Խէր կերաւ անմախացաւ.
 Մէր կերաւ ուրախացաւ,
 Քեօր կերաւ, գլորեցաւ.
 Աղբէր կերաւ, վեր - վեր թռաւ.
 Արմենակ նստի ծառի տակին,
 Ծամեր թալի ծառի ճեռողին.
 Առջև դրի նռան գինին.
 Էրանեկ էն տարին.
 Ինչ Երուսաղէմ քեաղաք շինեցին,
 Շինեցին, թմրմեցին.
 Գնացին, խասան ծառ խնկան.
 Պալթէն զանէն, ծառ կը ճղեր.
 Սղոց քեաչին, արուն կը վզէր:

*
* *

*) Վան քաղաքի մէջ պատեմիներ դասարկ դդում կը կախեն երդիւմէն,
 կերգեն:

1) Ամեն տղի վերջ «ալէլուի» պիտի կրկնուի:

Մարիամ զնաց դուռն էրին.
 Քեամակ ի զար խաչաքեարին.
 Մնաւ, իբի Յիսուս որդին:
 Էրանեկ քեւ պիւրթ խանձարուր,
 Որ Քրիստոս մէջ քեւ վաթիւթեցին.
 Էրանեկ քեւ, Խօռոմսիմէ,
 Որ քրիստոսին տատմէր էղար,
 Էրանեկ քեւ, գետ Յորդանան,
 Որ Քրիստոս մեջ քեւ մկրտեցին.
 Էրանեկ քեւ, Սուրբ Յովանէս,
 Որ Քրիստոսին քեաւոր էղար:

*
 * *

Գեաւաթի նարեկ գիւղի բարբառով *).

Յըս օր տօն էրի Մարիամուն
 Մայրամ զնաց դուռն յէրին.
 Քամակ էզար խաչափէտին.
 Մնաւ էրի Յիսուս որդին:
 Նը՛ սուն եմ, նը՛ գերան եմ,
 Քրիստոսին խաչափէտ եմ:
 Մամիկ, մամիկ ես քեւ ծառայ՝
 Սոյեր խազի ճառւղու արա.
 Զուր մառնի դուռ մէկ գեաւ արա.
 Էդ յէղմներ ճամխու արա:
 — Զեր տղի անուն Բնչ ի. — Աւետիս:
 — Աւետիս նստէ ծառի տկին,
 Բռչամ թայե ծառի ճղին
 Կթխէն առջև նռան գինին
 Սուֆրէն առջև խազար բարին:



*) Աստծ է Թամկօ Դամէկեան: